# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 4 » փետրվարի 2019 թվականի N: 9 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N1510-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 52-րդ, 54-րդ, 58-րդ կետերի դրույթները և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների 2018 թվականի 2-րդ կիսամյակի ծառայողական գործունեության արդյունքները.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

«Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում» հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի համար նախատեսված ֆինանսական միջոցներից, պարգևատրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքացիական ծառայողներին՝ համաձայն հավելվածի:

Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Փոխարինող

*Իսկականի հետ ճիշտ է*